



LIGA INSURANCE

Member of **GRAWE GROUP**



ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Դժբախտ պատահար է համարվում արտաքին, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ), չմտադրված, անկանխատեսելի պայմանների և հանգամանքների պուզադիպումը, որոնց դեպքում Ձեր կամքից անկախ վնաս է հասցվում Ձեր կյանքին կամ առողջությանը:



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1
Հեռ.՝ (+374 12) 88 88 88
Կայք՝ www.ligainsurance.am



ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի Խորհրդի կողմից 22.05.2023թ. նիստի թիվ 06 արձանագրությամբ հաստատված Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններում այցելելով ապահովագրական ընկերության պաշտոնական կայքը:



ՈՐՏԵՂ Է ԳՈՐԾՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ



ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում /վերակնքվում է վարկի գործողության ողջ ժամկետում՝ բացառությամբ վարկային պայմանագրով սահմանված դեպքերի:



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

Կարգավորվում է Ձեր վարկային պայմանագրով և/կամ հրապարակային օֆերտայով սահմանված պայմաններով:



ՈՐՔԱՆ Է ՉՀԱՏՈՒՅՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

Յուրաքանչյուր դեպքի գծով 20,000 ՀՀ դրամ:



ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Համաձայն վարկային պայմանագրի՝ Ձեր կողմից ապահովագրավճար չի վճարվում:



ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԶԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՈԻՄ

- Պատահարի տեղի ունենալուց կամ հայտնի դառնալու պահից հետո անհապաղ (ցանկալի է պատահարը տեղի ունենալուց հետո 48 ժամվա ընթացքում՝ հատուցման կարգավորման հետագա խնդիրներից խուսափելու համար), սակայն ոչ ուշ, քան մինչև 30 օրվա օրվա ընթացքում անհրաժեշտ է վանգահարել (+374 12) 88 88 88 հեռախոսահամարով,
- Կատարել ապահովագրական ընկերության ցուցումները,
- Համաձայն ցուցումների հնարավոր է անհրաժեշտություն առաջանա ներգրավել Ոստիկանություն, ԱԻՆ կամ այլ իրավասու մարմինների:

ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՅՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ապահովագրական պատահարից հետո ոչ ուշ քան 45 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերության գրասենյակում լրացնել հայտային դիմումը կամ այն ուղարկել էլեկտրոնային եղանակով՝ ապահովագրական ընկերության մասնագետների կողմից տրամադրված կապի միջոցներով,
- Ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը,
- Սպասել ապահովագրական ընկերության հետագա ցուցումներին,
- Հատուցման կամ մերժման որոշումը կայացվում է հայտի կարգավորման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում,
- Հատուցման գումարը վճարվում է հատուցման որոշում կայացնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՅՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Ցանկացած պարագայում, հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Սահմանված ժամկետում ապահովագրական ընկերությունը և համապատասխան իրավասու մարմինները (Բժշկական հաստատություն, Ոստիկանություն և այլն) չեն տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին,
- Սահմանված ժամկետներում չեն ներկայացվել փաստաթղթերը և տեղեկությունները կամ նախապես ներկայացվել են կեղծ ապացույցներ,
- Ապահովագրված անձի կողմից դիտավորյալ հանցանք գործելու կամ հանցագործության մեջ մասնակցելու,
- Ապահովագրված անձի կողմից իրեն դիտավորյալ մարմնական վնասներ հասցնելու,
- Ապահովագրված անձի կողմից առանց տվյալ կարգի վարորդական իրավունքի փոխադրամիջոց վարելու,
- Ապահովագրված անձի կողմից ոչ սթափ վիճակում (այդ թվում՝ տոքսիկ նյութերի ազդեցության տակ) փոխադրամիջոց վարելու,
- Ապահովագրված անձի ինքնասպանության (ինքնասպանության փորձի) արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ նա հասցվել էր նման վիճակի երրորդ անձանց անօրինական գործողությունների արդյունքում,
- Ապահովագրված անձի ոչ սթափ վիճակում (այդ թվում՝ տոքսիկ նյութերի ազդեցության տակ) տեղի ունեցած այնպիսի դժբախտ պատահարի, որի վրա հասնելուն նպաստել են ապահովագրված անձի գործողությունները կամ անգործությունը,
- Ապատալրկման վայրում ապահովագրված անձի հետ պատահած դժբախտ պատահարի,
- Ապահովագրված անձի ալկոհոլով (ալկոհոլ պարունակող նյութերով), ինչպես նաև թմրանյութերով, տոքսիկ նյութերով թունավորման, եթե իրավասու մարմինների կողմից չի սահմանվել նրանց բռնի ներարկումը, սխալմամբ օգտագործումը,
- Ապահովագրված անձի կողմից սպորտի վտանգավոր տեսակներով (ավտո- և մոտոսպորտ, օդային սպորտ, ձիասպորտի ցանկացած տեսակներ, մարտարվեստի տեսակներ, ալպինիզմ, լեռնային և ջրային վբոսաշրջություն, ստորջրյա նավարկություն, հրաձգային սպորտ և այլն) պարբերաբար վբաղվելու,
- Դժբախտ պատահարի, որը տեղի է ունեցել հիվանդության կապակցությամբ ապահովագրված անձի հիվանդանոցային բուժման ժամանակ և տվյալ հիվանդության արդյունք է,
- Ռազմական գործողությունների, զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների,
- Քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուլումների, գործադուլների, ահաբեկչական գործողությունների,
- Միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ուղղակի կամ անուղղակի ազդեցության,
- «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի Խորհրդի կողմից 22.05.2023թ. Նիստի թիվ 06 արձանագրությամբ հաստատված Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններով սահմանված այլ դեպքերում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

**Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում
Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ,
Դատարան/Արբիտրաժային դատարան:**

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: